ԱՄՆ Աշխատանքի նախարարություն

Եզրակացություններ 2022 թ. մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերաբերյալ

Հայաստան

2022 թվականին Հայաստանը մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման ուղղությամբ նվազագույն առաջընթաց է արձանագրել: Կառավարությունը ընդունել է նոր Քրեական օրենսգիրք և Քրեական դատավարության օրենսգիրք, որոնք ամրապնդում են Հայաստանի երեխաների պաշտպանության շրջանակը՝ քրեականացնելով երեխաների թրաֆիքինգը և երեխաների կոմերցիոն սեռական շահագործումը: Կառավարությունը ընդունել է նաև աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ համընդհանուր տեսչական ստուգաթերթ՝ կիրառելի աշխատանքի բոլոր ոլորտներում: Սակայն, չնայած մանկական աշխատանքին վերաբերող նոր նախաձեռնություններին, Հայաստանին նվազագույն առաջընթացի գնահատական է տրվում, որովհետև երկրում օրենսդրական հետընթաց է տեղի ունեցել, ինչը ձգձգում է մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերացմանն առաջընթացը: Աշխատանքի տեսուչները չունեն չհայտարարված ստուգումներ իրականացնելու լիարժեք լիազորություններ, չնայած 2022 թվականին ստացած լրացուցիչ լիազորություններին՝ չգրանցված զբաղվածության դեպքերի հայտնաբերման պարագայում իրականացնելու սահմանափակ չհայտարարված ստուգումներ: Չհայտարարված ստուգումներ չանցկացնելու հետևանքով մանկական աշխատանքին վերաբերող հնարավոր օրինախախտումներն ու աշխատավայրերում առկա աշխատանքային բնույթի այլ չարաշահումները կարող են մնալ չբացահայտված: Հայաստանում երեխաները ներգրավված են մանկական աշխատանքի վատթարագույն ձևերում, ընդ որում՝ սեռական բնույթի կոմերցիոն շահագործման մեջ՝ երբեմն մարդկային թրաֆիքինգի արդյունքում: Երեխաները նաև ներգրավված են գյուղատնտեսական բնույթի մանկական աշխատանքում: Բացի այդ, կառավարությունը մանկական աշխատանքի տարածվածության վերաբերյալ պաշտոնական տվյալներ կանոնավոր կերպով չի հավաքում կամ համակարգում:

Մանկական աշխատանքի վերացման նպատակով առաջարկվող պետական գործողություններ		
Ոլորտ	**Առաջարկվող գործողություն**	**Տարի(ներ) Առաջարկվում է**
Իրավական շրջանակ	Աշխատանքի ընդունման նվազագույն տարիքը 16-ից բարձրացնել 18-ի, որպեսզի համապատասխանի պարտադիր կրթության տարիքին:	2022
	Ապահովել Հայաստանի օրենսդրությամբ 14-15 տարեկան երեխաների համար ընդունելի թեթև աշխատանքի տեսակների սահմանումը:	2014 – 2022
Գործադրում	Ամրապնդել տեսչական համակարգը՝ թույլ տալով չհայտարարված ստուգումներ:	2017 – 2022

Մանկական աշխատանքի վերացման նպատակով առաջարկվող պետական գործողություններ		
Ոլորտ	**Առաջարկվող գործողություն**	**Տարի(ներ) Առաջարկվում է**
	Աշխատանքի տեսուչներին լիազորել ստուգումներ իրականացնելու և վարչական տույժեր կիրառելու մանկական աշխատանքի բոլոր դեպքերի նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, որոնք կատարվել են աշխատանքային ժամերից հետո՝ գործարար տնօրենի կամ տնօրենի պաշտոնակատարի բացակայության դեպքում:	2021 – 2022
	Պաշտպանել երեխաներին՝ իրավապահ մարմինների աշխատակիցներին տրամադրելով մանկական թրաֆիքինգի զոհերի հետ հարցազրույց անցկացնելու հմտության մասնագիտացված ուսումնավարժանք:	2018 – 2022
	Իրավապահ մարմինների հետ համագործակցող մանկական թրաֆիքինգի զոհերին պաշտպանելու նպատակով կիրառել վկաների պաշտպանության գործող մեխանիզմները:	2011 – 2022
	Ապահովել, որ իրավապահ մարմինների պաշտոնյաները հասկանան իրենց լիազորված պարտականությունները, և որ Քննչական կոմիտեն պատշաճ պատրաստվածություն ստանա մարդկային թրաֆիքինգի զոհերի նույնականացման և հետաքննության աշխատանքներում:	2022
Համակարգում	Ստեղծել տնտեսության բոլոր ոլորտներում մանկական աշխատանքի բոլոր վատթարագույն ձևերի դեմ պայքարի համակարգման մեխանիզմներ՝ ներառյալ փողոցային աշխատանքը, ծառայություններն ու գյուղատնտեսությունը:	2009 – 2022
Կառավարության քաղաքականություն	Հայաստանում մանկական աշխատանքի բոլոր ձևերի դեմ պայքարի քաղաքականության որդեգրում, այդ թվում՝ գյուղատնտեսության, ծառայությունների, և ոչ պաշտոնական աշխատանքի այլ ձևերում:	2022
Սոցիալական ծրագրեր	Քաղաքականության ու ծրագրերի իրազեկման նպատակով, հավաքել և հրապարակել տվյալներ՝ երեխաների աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ, այդ թվում, գյուղատնտեսության և շինարարության ոլորտում:	2019 – 2022
	Ապահովել, որ բոլոր երեխաները, ներառյալ աղջիկներն ու հեռավոր շրջաններում բնակվող երեխաները, ինչպես նաև ցածր եկամուտ ունեցող ու	2010 – 2022

Մանկական աշխատանքի վերացման նպատակով առաջարկվող պետական գործողություններ		
Ոլորտ	**Առաջարկվող գործողություն**	**Տարի(ներ) Առաջարկվում է**
	սեզոնային աշխատանքի համար ճանապարհորդող ընտանիքների երեխաներն ու էթնիկական փոքրամասնություն հանդիսացող երեխաներն ունենան կրթության հավասար հասանելիություն:	
	Ամրապնդել կրթական համակարգում դասից անհարկի բացակայող երեխաներին բացահայտելու միջոցառումները, և կիրառել դպրոց հաճախելու պարտադիր պահանջները՝ ապահովելու որ երեխաները չներգրավվեն մանկական աշխատանքներում:	2020 – 2022
	Խնամակալ հաստատություններից դուրս գրված երեխաների համար ապահովել խնամքի ծառայությունների մատչելիությունը՝ երեխաների ինստիտուցիոնալացումը կանխելու հավելյալ ջանքերին զուգընթաց, և ապահովել, որ պետական հաստատությունների խնամքի տակ ներկայիս գտնվող երեխաները չներգրավվեն մանկական աշխատանքում:	2015 – 2022
	Ապահովել հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների համար սովորական կրթության հասանելիությունը՝ բարելավելով ֆիզիկական ենթակառուցվածքի մատչելիությունն ու հոգեկան խանգարում ունեցող աշակերտների համար հատուկ ուսուցիչների և այլ մասնագետների առկայությունը:	2014 – 2022
	Ապահովել Ընտանեկան նպաստների ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումն ու դրանց մասին հասարակությանը տեղեկացումը:	2021 – 2022
	Իրականացնել փողոցային աշխատանքում ու գյուղատնտեսության ոլորտում գոյություն ունեցող մանկական աշխատանքի խնդիրներին վերաբերող ծրագրեր:	2009 – 2022
	Բավարար անձնակազմ ու ռեսուրսներ հատկացնել երկրով մեկ սոցիալական ծառայություններ տրամադրելու և դրանց մասին հանրությանը տեղեկացնելու նպատակով, ծառայություններ մատակարարողներին բավարար վերապատրաստում առաջարկել եւ նրանց նրանց	2020 – 2022

Մանկական աշխատանքի վերացման նպատակով առաջարկվող պետական գործողություններ		
Ոլորտ	**Առաջարկվող գործողություն**	**Տարի(ներ) Առաջարկվում է**
	աշխատանքային ողջամիտ ծանրաբեռնվածություն հանձնարարել:	